

մէկ գորգ է ուղածդ: Արդ, ինծի իմացուր թէ մէկ կամ երկու գորգ է ուղածդ, միեւնոյն ատեն իմացուր նաեւ թղաչափը»:

1705էն կայ նաեւ կտակագիր մը Գրիգորի դուստր Սինամպարէ, որուն համաձայն «մին մեծ խալի տան Ա(ստուա)ճածնա եկեղեցուն քառասնից»⁽⁸⁴⁾: Իսկ 1765ին Մկրտիչի որդի Ստեփաննոս վարդապետ Նոր Զուղայի վանքին Յակոբ վարդապետին կը յանձնէ ի միջի այլոց՝ նաեւ «Գ(3) Խալի եւ Ա(1) Խալիչայ»⁽⁸⁵⁾:

Հայաստանի կամ իր դրացի երկիրներուն մահմետականներուն ալ յատուկ էր գորգ գործածել, պատուելու համար մահմետական դամբարաններ: Առ այս կան բազմաթիւ վկայութիւններ, սակայն ես միայն յատուկ կը բերեմ John Chardinի մէկ վկայութիւնը, որ 1675ական թրւականներուն Փաթմայի դամբարանը (Պարսկաստան) նկարագրելու ատեն կը վկայէ որ «գետինը ծածկուած էր բուրդէ շատ ընտիր գորգով մը, որուն վրայ մեծ տնակատարութիւններու ատեն՝ մետաքսեայ եւ սոկեթել հիւսուած ուրիշ գորգ մը կը սփռեն»⁽⁸⁶⁾:

ԳՈՐԳԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՌԱՄԻԿ ՀԱՅՈՒՆ ՄՕՏ

Մենք արդէն տեսանք որ հայ արքունեաց եւ ազնուականութեան մօտ գորգը կը գործածուէր իբր պատուոյ նշան, ինչպէս նաեւ ուրիշ գործածութիւններու կարգին՝ իբր ճաշու սեղան ալ: Առ այս մեր մատենագրութեան մէջ կը հանդիպինք հին եւ թանկագին վկայութեան մը՝ Յովհ. Մանգակունիի մօտ: Այս վկայութիւնը ինքնին վերջնականապէս կու դայ հաստատել թէ գորգը հայ ռամիկ դասակարգին մէջ ալ իբր ճաշի սեղան եւ իբր պատուոյ նշան գործածուած է: Մանգակունի խօսելով ԱԳԱՊԻ քրիստոնէական սովորութեան մասին հայոց մէջ՝ կը վկայէ թէ հարուստ եւ աղքատ միասին կը ճաշէին, սակայն «նոքա (հարուստները) մեծարանօք ի վեր, եւ քրիստոս (այսինքն աղքատները) արհամարհանօք ի խոնարհ, նոքա (հարուստները) պատուով ի բազմականի, եւ քրիստոս (աղքատները) արհամարհանօք առ պատուանդանի»⁽⁸⁷⁾ կը նստէին: Մանգակունի իր այս յանդիմանական տողերով կ'ուղէ ցոյց տալ որ հարուստները այդ ազգային ճաշին ժամանակ իսկ իբր քրիստոնեաներ ամէնուն հետ հաւասար սեպելու տեղ ինքզինքնին, կը նախընտրէին «պատուանդանի»ն, այսինքն բեմին վրայ, ուր ճաշը սարքուած կ'ըլլար «բազմականի», այսինքն գորգի վրայ նստիլ, մինչ աղքատները բեմին անդորդ մասին վրայ նստած կը ճաշէին:

(84) Այս կտակին շորս տարբեր վաւերաթուղթերը կան. Քիւրտեան լուսանդար, Մրար II շորս լուսանդարներ. Նոր Զուղայի դիւան:

(85) Քիւրտեան լուսանդար, Մրար V Նոր Զուղայի դիւան:

(86) Travels. — London, 1686, p. 215.

(87) Յ. Մանգակունիոյ ծառք: — Վենետիկ, 1860, էջ 61: